

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ



Ռ. Ա. ԱԹԱՅԱՆ

**ԿՈՄԻՏԱՍԸ ՄՇԱԿԵԼ ԷՐ ԱՐԴՅՈՒՔ «ՀՐԵՇՏԱԿԱՑԻՆ»-Ը
ԹԵ ՌԵ**

(Մ. Եկմալյանի «Պատարագի» մի օրինակում Կոմիտասի
կատարած խազագրությունների առթիվ)

Ինչպես հայտնի է, Յոթ սրբասացությունները, դրանց թվում և «Հրեշտակային կարգաւորութեամբ»-ը, ս. Պատարագի արարողության մեջ տարբեր տոնների համեմատ փելիոխվող հատվածներից են: Պատարագի խազավոր ձեռագրերում դրանք ընդգրկված են տարբեր քանակություններով: Մինչև այդմ դրանց առավել քանակությանը մենք հաճիպել ենք Վիեննայի Միհիթարյան մատենադարանում պահվող 1340 թ. մի Մանրուսմունքում (թ. 183): Վեց սրբասացություն: Տարբեր է նաև տպագրված Պատարագներում, Ն. Թաշճյանի գրառած Պատարագում և է. Արգարի մշակման մեջ՝ յոթ, Մ. Եկմալյանի Պատարագում՝ վեց: Կոմիտասի՝ 1933-ին տպագրված Պատարագի թնագրում միայն մեկ սրբասացություն է՝ «Ով է որպէս Տէր»-ը: Ինչո՞ւ...

Կոմիտասի այդ՝ արական երգչախմբի հատկացված Պատարագը նրա ամենակարևորուն երկերից է: Այն դրամատորգիական որոշակի ծրագրով և նյութերի որոշակի ընդգրկումով կառուցված համերգային ստեղծագործություն է և որպես այդպիսին լիովին ավարտված գործ է: Այդ երկը ստեղծելիս կոմպոզիտորն, ըստ երևույթին, անհրաժեշտ է գտել սրբասացություններից նրանում գետեղել միայն մեկը և հենց «Ով է որպէս Տէր»-ը: Այլ հարց է, որ հեղինակն իր երկը հնարավոր (և խոշոր) չափով հարմարեցրել է նաև պատարագի արարողությանը և կատարողին հնարավորություն է ընձեռել անհրաժեշտության դեպքում, օրինակ՝ «շարժական» տոնների համար, դրանում որոշ լրացումներ կատարել կամ որոշ հատվածներ փոխարինել: Մեզ հաջողվել է հայտնաբերել նման «հարակից» երգերից մի քանիսի (դրանց թվում նաև սրբասացությունների) արական երգչախմբային մշակումները, որոնք հեղինակը Պատարագում չի գետեղել, այլ առանձին է պահել: Մինչև վերջենս, սակայն, մեզ համար մոլոն էր մնում մասնավորապես «Հրեշտակային» և «Բազմութիւնք» սրբասացությունների հարցը՝ մշակել է արդյոք Պատարագի արարողության համար այնքան անհրաժեշտ

այդ հատվածներն և արական երգչախմբի համար, նոյն սկզբունքներով, ինչպես մշակված է հոյակապ «Ով է որպէս»-ը:

Կ. Պոլսում հեղինակի ղեկավարությամբ դեռևս ձեռագիր Պատարագի առաջին կատարողները միաբերան հաստատում էին, որ միայն մեկ սրբացություն են երգել: Ոչ միայն Պատարագի մեզ հասած բնագրում, այլև ժամանակին կատարման համար արտագրված երգչախմբային ձայնարածիններում նոյնական միայն մեկ նոյն «Ով է» սրբացությունն է: Հիրավի, թվում էր, թե այդ երկու սրբացությունները Կոմիտասը չի հասցել մշակել: Այս սրբացությունների «առավել անհրաժեշտության» և Պատարագի բնագրերում դրանց բացակայության հարցը գրադեգրել է կոմիտայան երկի գրեթե բոլոր տպագրողներին:

Կոմիտասի արական երգչախմբի հատկացված Պատարագը տպագրվել է յոթ անգամ (բոլորը՝ Սփյուռքում): Ցավոք պետք է ասել, որ գրեթե բոլոր տպագրություններն են, ճիշտ է՝ տարբեր չափով, մեղանչել են հեղինակային բնագրերի դեմ: Առանձնապես ցայտուն դա արտահայտվել է հենց սրբացությունների բաժնում: Ոմանք Կոմիտասի սրբացությունը Պատարագից պարզապես դուրս են թողել, այս դեռ ոչինչ. ոմանք եղածին հավելել են իրենց հորինածը. հրատարակիչներից մեկը հարցն ավելի հեշտությամբ լուծել է «կոլումբույան» եղանակով՝ կոմիտայան «Ով է որպէս սրբացության երաժշտությանը «հարմարեցրել» է մի քանի որիշ սրբացությունների խոսքային տեքստերը... Որևէ դասական գործի (ինչպիսին նաև Կոմիտասի Պատարագն է) խմբագրության և հրատարակության համբանդանուր կանոններից ելմելով, հեղինակային տեքստի հկատմամբ նման կամայականությունները պետք է ճանաչվեն որպես անընդունելի: Բարեբախտաբար ներկայումս հայտնաբերվեցին խնդրո առարկա մշակումների գոյություն ունեցած լինելը հաստատող ծանրակշիռ փաստեր:

Վիեննայի Միսիթարյան Միաբանության մատենադարանում պահվում է Մ. Եկմալյանի Պատարագի մի շքեղակազմ օրինակ, վրան ճնշումով խոշորատու-ուկեցիր՝ «Նորին Վեհափառութեան Լուսամիտ Հովանարողի եկեղեցական երաժշտութեան, ամենախոնարի նուէր ի Յօրինողէն»: Կազմի ստորին մատում անձկատ մանր ուկետառ ուստերենով գրված է գիրքը կազմողի անունը՝ «Օ. Զիբերտ, Տիֆլիս»: Պահպանակի վերջին թերթին կարդացվում է մատենադարանի աշխատակցի ծանոթագրությունը՝ «Գնուան Ռուբեն Թէրլէմէզեանէ մեկ անգիհական ֆունդի: Ըստ Թէրլէմէզեանի վկայութեան Կոմիտաս վարդապետի օրինակն է մատենս և խազագրությունը Շորիս են»:

«Եկեղեցական երաժշտության լուսամիտ հովանավարող Նորին Վեհափառությունը», անկասկած, Մկրտիչ Խորինյան կաթողիկոսն է (և որքան դիպուկ է գրել այս խոսքերը Մ. Եկմալյանը): Բայց այստեղ հանձնանահին շատ բան կա. ինչպես է այդ մատյանը հասել Ռուբեն Թէրլէմէզյանին. դեռ ավելին՝ եթք, ինչու և ինչպես է այն դրված եղել Կոմիտասի տրամադրության ներքո... Այս հարցերի պարզաբանումը բնավ անէական չէ (օրինակ՝ ժամանակային հանգամանքները պարզելու համար), բայց դրանց մեճք կանդրադառնանք այլ առիթով:

Խազերի «գաղտնիքը կորսվելոց հետո» առավել համախակի գործածվող սյրամանը ցույցացների մաղեղներում ժամանակի ընթացքում տեղի է ունեցել որոշ միանալեցուն: Ըստ երևույթին դա է «ոգեշնչել» ակնարկված հրատարակչին կատարելու սրբացությունների երաժշտության այլ «վերշնական» նորացումը:

Մատյանը նշված է Միխիթարյան բազմահմուտ Հայր Օգոստինոս վ. Սեբուլիսի կազմած «Յուցակ հայերէն ձեռագրաց Միխիթարեան Միարանութեան ի Վիեննայ, Գ հատոր»-ում (Վ., 1983), 75 էջում գետեղված է Ըկարագրությունը, որը բացի վերը բերված տեղեկություններից, նաև աւլած է՝ «Մատենս յատոկ իմաստով ձեռագիր չեն: Եկմալլանի՝ 1896-ին Լայպցիգ—Վիեննա տպագրված «Երգեցողութիւնը սրբոյ Պատարագի» տպագիր օրինակն է, որուն վրա Կոմիտաս վարդապետ մատիտով բազմաթիվ սրբագրութիւններ կատարած է, ժամանակը՝ 1896-ին ետք»: Նաև մանրամասն նշված են գրի այն էջերը, որոնցում կան «Կոմիտաս վարդապետի հայկական և եվրոպական խազագրությամբ հավելումներն ու սըրբագրությունները»:

Այս տեղեկություններին պետք է ավելացնենք նեղ-մասնագիտական մոտեցումից բխող, հարցի եռթյունը ավելի ճշգրտող երկու կարևոր տեղեկություն.

Առաջինը՝ ցուցակում թվարկված ոչ բոլոր էջերում եղող խազագրության մատուագիր նշումները Կոմիտասին են. դրանցում կան երեք (գոյցեև և շորս) տարբեր ձեռքեր, և սրանցով կատարված նշումները տարբեր, բայց միշտ որոշակի նպատակ են հետապնդել: Մասնավորապես, եվրոպական նոտաներով Եկմալլանի եռաձայն շարադրությունը բառաձայնի վերածող նշումները, թեև գրված են գրագետ ձեռքով, բայց Կոմիտասինը չեն:

Երկրորդը՝ Կոմիտասի բոլոր նշումներն ել (բոլոր հայկական նոտայով) սրբագրություններ կամ պարզ հավելումներ չեն և, ընդհանրապես, Եկմալլանի Պատարագի հետ անմիջական կապ չունեն (ի դեպ ասած՝ կապ չունեն նաև Եկմալլանի Պատարագի մասին 1897-ին Կոմիտասի տպագրած քննական հոդվածի բովանդակության հետ): Դրանք Պատարագի նշված հատվածների կոմիտասյան մեղեդիական մշակման և բազմաձայն մասն մտահացումներն են՝ երածշտական ինքնուրույն և կոնկրետ գաղափարներ՝ միշտ է՝ մեծ մասամբ ուրվագրային և հաճախ ոչ լրիվ. գրված է այն, ինչը Պատարագը մշակելու պրոցեսում մտքում ծագելուց հետո գրողը անհրաժեշտ է գտել այս կամ այն կերպ թղթի վրա ևս դրոշմել:

Եվ եթե «սրբագրություն» եզրն այս դեպքում այնուամենայնիվ կարող է մեջ բերվել, ապա դա կվերաբերի ոչ թե Եկմալլանի, այլ Ն. Թաշճյանի գրառած միաձայն մեղեդիներին, որոնք Եկմալլանի համար ել սկզբանդրություն են դարձել: Բայց այդ «սրբագրությունն» ել ոչ թե պարզապես շըտկում կամ ուղղում, ոչ թե խմբագրում կամ նոյնինկ բարեփոխում, այլ ստեղծագործորնեն վերամշակում է: Կոմիտասի նշումների բնույթը առարկայորեն ցուցադրելու նպատակով որպես նմուշ բերենք «Ով է որպէս» սրբասցությունից «Աստուած մեր, ինչեցաւ վասն մեր, թաղեցաւ եւ յարեաւ» մեղեդիական հատվածը Ն. Թաշճյանի գրառած տարբերակով (Թաշճյան— էջ 147), Մ. Եկմալլանի օգտագործած ձևով, որ Թաշճյանի թերթակի խմբագրումն է (Եկմալլան, էջ 29—30) և այն տարբերակով, որ Կոմիտասը

Կոմիտասի Պատարագի «տպարանային կյանքի» կամ, այսպես ասենք՝ «առարկայորեն կենցաղավարելու» բազմաշարշար պատմությանը, նրանում տարբեր հրատարակիչների կատարած փոփոխություններին՝ հեղինակային երածշտական տեքստի աղավաղում, պլազման ձևերով վերաշարադրություն, ինքնահնար հատվածների ներդրում, միանգամայն ավելորդ նվազակցության, այն է՝ ցածրաճաշակ նվազակցության հավելում և այլն. մենք անդրադարձել ենք կոմպոզիտորի Երկերի ժողովածուի 7-րդ հատորում («Պատարագ»), որը երկայում պատրաստ է հրատարակության:

մատիտով որվագրել է մատյանում. համեմատությունից պարզ երևում է նիմյանցից միանգամայն տարբեր, սեփական գեղարվեստական համոզմունքներ ու պատկերացումներ.

Օրինակ 1

Դժվար չէ կուանել այն սկզբունքները (պահանջները), որոնցով առաջնորդվել է մասնավորապես Կոմիտասը բերված մեղեդիի և ընդհանրապես հայկական մեղեդիների նման վերամշակման գործում. դրանք մի կողմից ընդհանուր սկզբունքներ են՝ մեղեդիական տրամաբանվածություն, ձևի և չափի գգացման պահպանում, գեղարվեստական պարզություն՝ այս բոլորը որոշակիացվել են ազգային ընդհանուր ոճի պահպանումով և զարգացումով, մյուս կողմից մասնավոր պահանջներ՝ առավել ավանդական (մասնավորապես Էջմիածնական) տարբերակների օգտագործում և խոսքային տեքստի հատակ դրասերում: Այս ամենը տեսնվում, հասկացվում, զգացվում է խնդրությունում առարկա բոլոր նշումներում, որոնք, ցավով կրկնենք՝ մեծ մասամբ ամբողջական չեն:

Վիենայում պահվող Եկմալյանի Պատարագի օրինակում Կոմիտասի խազագրությունները նախ՝ հաստատում են այն, ինչը մինչև հիմա սովոր ենթադրաբար կարելի էր ասել՝ Կոմիտասը մշակել է կամ ձեռնարկել է մշակելու բոլոր սրբասացությունները, ապա՝ այդ խազագրությունը մեզ տալիս է մինչև այժմ անհայտ մնացած սրբասացություններից գոնեք մեկի՝ նոյն «Հրեշտակային»-ի կոմիտասյան մշակման լրիվ տեքստը:

Կոմիտասյան նման «խազագրությունները» — արտաքուստ դրանց նման նշումներ կան նրա գրեթե բոլոր բնագրերում (կարդալ-վերծանելը, ընդհանրապես, բավական դժվարին գործ է)*, դրա համար պետք է հիմնովին ծանոթ լինել նրա գրավոր-ստեղծագործական աշխատանքի բոլոր առանձնահատկություններին: Ներկա դեպքում գործը մասնավոր կերպով դժվարացնում է և այն, որ այդ մատիտով նշումները ի սկզբանե ել շատ մուգ չեն եղել և շատ տեղերում արդեն շնչվել են, երբեմն հազիվ կարելի է նըշմարել, որ այսինչ տեղում ինչ-որ բան գրված է եղել: Եվ, վերջապես, դեպքը բոլորովին արտաքուստ է նրանով, (թեև Կոմիտասի համար ոչ բացադիր), որ իր ստեղծագործական մտահիացումները նա գրել է ոչ թե առանձին «մաքուր» թղթերի վրա, ասենք՝ հատուկ նոտատետրում, այլ տպագրված նոտաների «սպիտակ լուսանցքներում»: Այս բանի համար կարող էին լինել կոնկրետ պատճառներ (ասենք՝ ձեռքին համապատասխան թուղթ չկար, այսպիսի դեպքեր ևս շատ են եղել): Բայց այս դեպքում պատճառը սովոր շտապողականությունն է եղել. Կոմիտասը հիմնվում էր այն նոյն մեղեդիների վրա, որոնք Թաշճյանի ժողովածուից քաղված, արդեն արձանագրված էին Եկմալյանի Պատարագում, իսկ Լայպցիգ—Վիենայում շատ հարմար տպագրված այդ մատյանում հայկական նոտայով նաև հանրագիր աշխատելու համար ազատ շատ տեղ կար...

* Եվ այսուհետ, այդ կարևոր նյութի ուսումնասիրության համար մեզ ընձեռած հնարքավորության համար պետք է մեր խորին երախտագիտությունը հայտնենք Վիենայի Միհիթարյան Միարանությանը, մասնավորապես Արքահայր Գրիգորիս Մանելյանին և Բայրութի Սեբուլյանին:

The musical score consists of four systems of music, each with two staves. The top staff is in G major and the bottom staff is in F major. The music is written in common time. The lyrics are written in Armenian below the notes.

System 1:

- Top staff: *Աւ-սու-*, *ա.8*, *stp*
- Bottom staff: *խա-*, *յաւ-*, *չա-*, *սչ-*

System 2:

- Top staff: *շէ-*, *յաւ-*, *չա-*, *սչ-*
- Bottom staff: *stp.*, *բա-*, *շէ-*, *յաւ-*

System 3:

- Top staff: *Աւ-սուս- ա.8*, *stp*, *խա-*
- Bottom staff: *վա-*, *պա-*, *շէ-*, *յաւ-*

System 4:

- Top staff: *պա-*, *շէ-*, *յաւ-*
- Bottom staff: *բա-*, *շէ-*, *յաւ-*

Final Measure:

- Top staff: *Աւ-սուս- ա.8*
- Bottom staff: *stp խա- շէ-յաւ- պա- շէ- յաւ-*

Որ այդ նշումները իրոք Կոմիտասին են, հաստատվում է ոչ միայն ձևագրի հանգամանքով ու գրության առանձնահատկություններով (թե սրանք, անշուշտ, շատ կարևոր են), այլ նաև գրված երաժշտության բուհ բովանդակությամբ, ոճով, ներդաշնակության և ձայնավարության հատկանիշներով, 1933-ին տպագրված Պատարագի բնագրի հետ համեմատության արդյունքներով և այլն: Պահպանված բոլոր նշումները մենք հայերատարությամբ վերծանեցինք, դրանք գրված են տպագրված Պատարագի բնագրից վաղ, որպես այդ Պատարագի սկզբնական ուրվագրություն: Որոշ հատվածներ առանց փոխվելու անցել են ավարտված Պատարագի մեջ, այլ հատվածներ նոյնականացնելու գրված են եղել Պատարագի բնագրում, բայց հետագայում հեղինակն իր գրածը մասամբ փոփոխել է: Բոլոր նշումներն այստեղ նկարագրել և մեջ բերելը հնարավոր բան չէ*: Այստեղ մենք կսհմանափակվենք միայն «Հրեշտակային կարգաւորութեամբ» եռաձայն սրբասացությունը առաջին անգամ հրապարակելով (այն առավել լիիվ է ուրվագրված), դրանում, բազմաձայն ամբողջության մեջ հստակ իրականացված են այն նոյն սկզբունքները, որոնցով, ինչպես վերը նկատեցինք, Կոմիտասը ղեկավարվում էր արդեն իսկ սոսկ մեղեդին մշակելիս:

Օրինակ 2ա և 2բ

Հնարավոր է, որ այս նոյն երկը հեղինակն ունեցել է և մաքոր արտագրված վիճակում, բայց այդպիսի մաքրագրություն և, ընդհանրապես, «Հրեշտակային»-ի կոմիտասյան մշակման որևէ այլ հետք դեռ գտնված չէ: Մինչդեռ այս մշակումը, իրենում ներփակված գեղարվեստական խորոնկ գաղափարի պարզ, անպանույն իրականացումով և ամբողջության յուրահատուկ շերմաշունչ-ներդաշնակ հնչողությամբ իր այս ուրվագծային վիճակում էլ խիստ առինքնող է:

Հույս պահենք կոմիտասյան սրբասացությունները և Պատարագի լրացրիչ այլ հատվածները գտնելու իրենց մաքոր արտագրված, վերջնական տեսքով:

* Դրանք, ինչպես և Կոմիտասի ներկա Պատարագի հետ առնչվող նորամայտ բոլոր բերված են երկերի ժողովածուի նոյն 7-րդ հատորում:

ԿՈՄԻՏԱՍԱ

ՀՐԵՇԾԱԿԱՅԻՆ ԿԱՐԳԱԽՈՐՈԽԹԵԱՄԲ

(վասն արական եռաձայն խմբի)

Վերծանում և խմբագրություն Ի. Աթայանի

Միայնակ

Սոսկ Ա. Բ.:

Piano

Հրեշտակա - կա -

կարդառ - ռու -

շռէ - շասկային կարգա - ռու -

կարգա - ռու -

բեաբ

լը - յեր

Աս - տուածյունորեկեղե - ցի:

լը - յեր,

լը - յեր Աս - տուածյունորեկեղե - ցի:

բեաբ

լը - յեր,

լը - յեր կը - եկեղե - ցի:

իսքուհին

հա - կարդ,

հա - կարդ

հա - կարդ

հա - կարդ,

հա - կարդ

Այս յօդուածը առնուած է "Եղմիածին" ամսագրի 1991 ԴԱԶ համարելի 86-93 (Ո. Աբայան):